ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻՆԻ
ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 8-ին Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում տեղի ունեցավ համայնքի 2010թվականին կատարվելիք աշխատանքների հաշվետու ժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավար պարոն՝ Ա.Արշակյանը և ներկաներին հայտնեց ,որ ժողովի նպատակը կատարվելիք աշխատանքների մասին հաշվետվության ներկայացնելն է:

Այնուհետև ներկայացրեց համայնքի ժողովի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
   Զեկ. Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Արշակյան

- Եռամյա ծրագրերի կատարման մասին
- 2010 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարողականի մասին
- Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հետ կապված հարցերի մասին
- Համայնքի իրականացվող կրթական և առողջապահական հիմնարկների գործունեության մասին

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Հաշվետվությամբ ելույթ ունեցավ համայնքի ղեկավար՝ Ա.Արշակյանը

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ծխերի թիվը - 763
Ընտրողների թիվը - 2000
Համայնքի բնակիչները - 3103 մարդ, այդ թվում

- Կանայք - 1557
- Տղամարդիկ - 1546
- Թոշակառուներ - 360
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 19
- Հայրենական պատերազմի մասնակիցներ - 5
- Հաշմանդամներ - 50, որից
- Երեխաներ - 6
- Նպաստառու ընտանիքներ - 84
- Բազմանդամ ընտանիքներ - 80
  / երեք և ավելի երեխաներ/
- Զոհվածի ընտանիքներ - 12
- Անաշխատունակ բնակչություն - 40

- Աշխատանք ունեցողների թիվը - 120
- Գործազուրկներ - 800
- Աշակերտների թիվը - 393
- Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը - 50

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը - 4001.0 հա

- Ընդ. Գյուղ. Նշանակության հողեր - 1640.0 հա , այդ թվում՝
- Վարելահողեր - 1079.0 հա
- Խոտհարք - 900.0 հա
- Արոտավայր - 1350.0 հա
- Արդյունաբերության ընդերքօգտ. և այլ արտադր. Նշ. Օբյեկտներ - 8.0 հա
- Անօգտագործելի հողեր - 1100.0հա
- Էներգետիկ տրանսպորտ. Կապի Կոմունալ ենթակ. Օբյեկտներ - 1.0 հա
- Գերեզմանատներ - 5.0հա
- Տնամերձ հողեր - 200.0
- Դպրոցամերձ հողամաս - 1.5հա
- Պատմական և մշակութային տարածք - 7.70 հա
- Սեփականաշնորհված հողեր - 1686.0հա
- Հատուկ պահպանված տարածք - 2.0 հա

Եռամյա ծրագրով նախատեսված կատարվելիք աշխատանքների մասին

Համայնքի ղեկավարը նշեց, որ 2010 թվականի համար նախատեսված աշխատանքներից կատարվել է ճանապարհների վերանորոգում:

Այնուհետև անդրադարձ կատարեց օրակարգում նշված մյուս ենթակետերի վերաբերյալ :

2010 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

	2010 թվական		
	պլան	կատարող	%
Հողի հարկ	5240.0	4958.2	94.6
Գույքահարկ	2050.0	2699.2	131.6
Տեղական տուրք	480.0	443.0	92.2
Հողերի վարձավճար	1030.0	990.9	96.2

Համայնքի ղեկավարը բնակիչներին ծանոթացրեց հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ծրագրի շրջանակներում համայնքի ղեկավարը կարևորեց հատկապես հետևյալ աշխատանքները.

1. Դպրոցի վերանորոգում
2. Աղբահանության խնդիրների վերացում
3. Ճանապարհների նորոգում
4. Մանկապարտեզի վերանորոգում և գույքի ձեռքբերում
5. Բուժ. Ամբուլատորիայի ընթացիկ վերանորոգում

Նշեց, որ համայնքի բյուջեի ընձեռած հնարավորությունների շրջանակներում 2010 թվականի առաջինից երրորդ եռամսյակում Լեռնանիստ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է 5.0 մլն. դրամ օգնություն:

2. ՀԱՐՑԵՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Համայնքի բնակիչ, ավագանու անդամ՝ Ի.Մելքոնյանը հարց բարձրացրեց Երևան- Սևան մայրուղուց գյուղ մտնող ճանապարհի կառուցման մասին, որը շատ հրատապ է ավտովարորդների համար, որոնք անընդհատ տուգանվում են ավտոտեսուչների կողմից,աջ շրջադարձ կատարելու համար:

2. Համայնքի բնակիչ Ա.Մկրտչյանը շատ կարևոր հարց բարձրացրեց սեփականատերերի կողմից չօգտագործվող հողերի ետ վերադարձրած վկայականների համար գումարի մուծման անհնարինության մասին և խնդրեց հարց բարձրացնել կառավարության առջև , վերանայելու այդ հարցը:

Բնակչության կողմից եղան տարբեր բնույթի հարցեր, որոնք առկա են համայնքի բնակչության շրջանում, հարցերին տրվեց սպառիչ պատասխաններ :

Ամփոփելով կայացած ընդհանուր ժողովը, համայնքի ղեկավար Ա.Արշակյանը բնակիչներին խոստացավ մշտապես աջակցել և օգնություն տալ սոցիալապես անապահով ընտանիքներին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Արշակյան

Քարտուղար՝ [illegible]